Արձանագրություն N 3

ՀՀ քննչական կոմիտեի կողմից կինոխցիկների (տեսաձայնագրման սարքերի) ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀ ՔԿ ՀԲՄԱՊՁԲ-ՏՁՍ-23/1** ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5

16 մայիսի 2023թ.
ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Հովհաննիսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Մարտիրոսյան, Ա. Մքոյան, Տ. Ամիրյան, Ա. Եղիազարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Նազարյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	*Չափաբաժնի անվանումը*	*Գնման հայտով սահմանված գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)*
1	*կինոխցիկներ (տեսաձայնագրման սարքեր)*	*235 500 000*

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«**ՀՀ ՔԿ ՀԲՄԱՊՁԲ-ՏՁՍ-23/1**» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/հ	*Մասնակցի անվանումը*	*Հասցեներ*
1	**«Փրիթի Ուեյ» ՍՊԸ**	ՀՎՀՀ՝ 01829451, ՀՀ, ք. Երևան, Ծ. Իսակովի 48/1, հեռ. 077 72 31 35, b2bvesta@gmail.com

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

3.1. Մասնակցի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող փաստաթղթերը:

4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

4.1 Մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը ուղարկվել է պատասխանատու ստորաբաժանմանը՝ եզրակացություն տրամադրելու նպատակով:

4.2 Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակցի կողմից ներկայացված հայտը և հաշվի առնելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված եզրակացությունը՝ արձանագրեց, որ ներկայացված հայտում կան անհամապատասխանություններ, մասնավորապես.

- Հավելված 1-ը՝ Դիմում հայտարարությունը, ստորագրված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:
- Ներկայացված լիազորագրին կցված չեն լիազորողի և լիազորված անձի անձնագրի /կամ նույնականացման քարտի/ պատճենները:
- Հավելված 1.1-ում՝ Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, տեխնիկական բնութագիր դաշտում գրված է «սարքի ծրագրային ապահովումը /SOFTWARE-ը/, այնպես էլ հատուկ ծրագրային ապահովումը ցանկալի է լինեն հայաֆիկացված», սակայն համաձայն պատասխանատու ստորաբաժանման եզրակացության պետք է հստակեցվի հայաֆիկացված է, թե՝ ոչ: Ինչպես նաև գրված է «Տեսաձայնագրման հորիզոնական անկյունը 140₀», սակայն պետք է գրվի «Տեսաձայնագրման հորիզոնական անկյունը 140 ^{0} » կամ «Տեսաձայնագրման հորիզոնական անկյունը 140 աստիճան »:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև **«ՀՀ ՔԿ ՀԲՄԱՊՁԲ-ՏՁՍ-23/1»** ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.9 կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ 16.05.2023թ.-ին նիստը կասեցնել և ծանուցել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) — Կ. Հովհաննիսյան

անդամներ՝

1.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Կ. Մարտիրոսյան
2.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Ա. Մքոյան
3.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Տ. Ամիրյան
4.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Ա. Եղիազարյան
5.Գնման Պատասխանատու/ հանձնաժողովի քարտուղար (ԳՊ/ՄՀմ) — Ս. Նազարյան